

քածոյն են, կամ ումնից, երբ և քանիտով են դնուած: Ուստի և չէ թոյլատրւում նոցա ծագման հետ կապուած յեղատակներն և անհատական ջանքերը կորսուեն կամ զանցառութեան ու մոռացութեան տրուեն:

Անգլիական այս սովորութիւնը նոցանում նկատուած է իբր մի անզանցեալի պարտականութիւն, որ կապուած է ձեռագրի կենսագրութեան հետ: Փափակելի է որ մեր հայ մտտենադարաններն ևս իրենց ուղղեցոյց ունենային այս պարտական ու առաքինի սովորութիւնը և փոքրագաբար չձգտէին ոչնչացնել այլոց ջանքերի հետքերը:

Բրիտանական Միւզէում ամենահին հայ ձեռագիրը մի Աւետարան է, որ թուական չունի, բայց միայն ունի մի յիշատակարան աւելի յետագոյն դարերի ձեռագիր է և գրած է այսպէս «զտեղ եղիսէ զհրամանող սուրբ աւետարանիս որք ընթեռալք յաղաթս յիշեսջիք»:

Այս Աւետարանը երկաթագիր է և գրերը յոյժ նման են Մոսկուայի Լազարեան ձեմարանում եղած իններորդ դարի թուակիր Աւետարանին: Գրերի ընդհանուր առանձնայատկութիւնից երևում է թէ այդ Աւետարանը յամենայն դէպս գրուած լինելու է իններորդ դարի սկզբին:

Պրոֆ. Բոսիլէէրի այս ընտիր և բազմաշխատ դործն արժանի է հայ գրական աշխարհի մեծարանացն և մենք ամենքս պարտ ենք շնորհակալ լինել այս անգլիացի գիտնականին մեր ձեռագրերի պատմութեան մատուցած այս մեծ ծառայութեան համար:

Պ. Տօնպետեան.

Haik Johannissian, Das literarische Porträt der Armenier bei ihren Historikern vom V.—VIII. Jahrh. n. Chr. mit einer Einleitung über ihre Abstammung, historische Entwicklung und Geschichtsschreibung.

Rücha bei Leipzig, 1912.

Պ. Հայկ Յովհաննիսեանի սոյն գործը, հակառակ իր ընդարձակ վերնագրին, շատ աւելին է պարունակում իր մէջ, քան այդ վերնագրից կարելի էր եզրակացնել: Սա մի նոր քննական հայոց պատմութիւն է, որ բովանդակում է իր մէջ Ե—Ը դարերի շրջանը մանրամասն և նախընթաց ու յաջորդ շրջանները հակիրճ, բայց խնամոտ ուսումնասիրութեամբ՝ ակնկոյլ նախապատմական ժամանակներից, թէև բուն ուսումնասիրութեան նիւթը կազմում են

ե—Ը դարերի հայ պատմագրութեան հանդէս բերած անձնաւոր-  
 թեանց նկարագրեր միայն: Իւրաքանչիւր էջում ժրջան հեղի-  
 նակն ընդնշմարել է տալիս մեզ մասնագիտական այն լուրջ գա-  
 տիարականութիւնը, որ ստացել է գերման համալսարանում: Ինչպէս  
 վայել է ճշմարիտ գիտնականին, հեղինակը իւրաքանչիւր մատե-  
 նագիր առանձին առանձին քննելուց առաջ մի խորաթափանց  
 ակնարկ է ձգում ամբողջ հայ մատենագրութեան վրայ՝ ի վեր  
 հանելու համար այն էական գծերը, որ ընդհանուր են բոլոր հայ  
 մատենագիրներին: Աւելին գեռ. շատ յաճախ համեմատութեան  
 են առնուած նաև օտար ազգերի մատենագրութիւնները, որոնց մէջ  
 զուգահեռաբար հանդէս են գալիս նման գծեր: Օրինակ. էջ 54—55,  
 «Բոլորին ևս (մինչև Մովսէս Խորենացի և նրան ժամանակա-  
 կից պատմագրերին) ընդհանուր է մի ջերմ հայրենասիրութիւն,  
 մի թաւմ շունչ, մի յանգուզն շնչոտ և մի մարտասունչ ոգի, որոնք  
 կենդանութիւն են տալիս իրենց նկարագրութիւններին: Տիրող  
 ոգին բացարձակ ազգայնական է, ինչ որ յատուկ եր ամբողջ քրիս-  
 տոնեայ աշխարհին Դ. դարի վերջում, երբ համաշխարհային պատ-  
 մագրութեան մի դարագլխի յաջորդեց մի մասնական (partikula-  
 ristisch) դարագլուխ»:

Հեղինակն արդարև բազմակողմանի պատրաստութեան տէր  
 է և ծանօթ թէ հայ թէ օտար, իր առաջագրած խնդրի հետ կապ  
 ունեցող, մատենագրութեանց: Այս աշխատութիւնը պատրաստած  
 պահուն, նրա սեղանի վրայ շարքով գաւառուորած են բացի ամ-  
 բողջ հայ մատենագրութիւնից նաև յոյն և լատին պատմագրերը,  
 ինչպէս նաև ճին ու նոր այն բոլոր գիտնականների երկերը,  
 որոնցից կարող էր օգտուել: Այնպէս որ այս օրինակ մի աշխա-  
 տութիւն մեր անցնելի ուսումնասիրութեան վերաբերմամբ, թւում  
 է ինձ իր տեսակի մէջ առաջինը: Ընչոք է, բազմաթիւ հատուած-  
 ներ կան, որ չակերտների մէջ փոխ են առնուած զանազան հեղի-  
 նակներից, սակայն զբանք այնքան յաջող և պատշաճ կերպով  
 իրար հիւսուած են, որ զրա համար հեղինակը նոյնիսկ շնորհա-  
 կալութեան է արժանի, քանի որ այդպիսով հնարաւորութիւն է  
 տալիս մեզ առանց ժամանակի ուեկորդ կորստի մէկ կողմից  
 ծանօթանալու ուրիշ գիտնականների տեսութիւններին անմիջա-  
 կան կերպով, միւս կողմից աւելի լրիւ և դիւրաւ ըմբռնելու իր  
 հզրակացութիւններն՝ առանց ընդհատումների:

Դործի կատարելութեան համար չի խնայուած ոչ մի ջանք:  
 Մօտ 300 խիտ էջերից բաղկացած այս գիտական շարագրութիւնն  
 ինքնին արդէն ապացոյց է հեղինակի լուրջ վերաբերմունքին:  
 Ինչպէս վերնագրից էլ է երևում, զործը բաղկանում է երկու էա-  
 կան մասերից 1) մի ցնրածափնից, որի մէջ մտնում են հայերի



ծագումը—ըստ ազգային աւանդութեանց, ըստ հնագիտական հետազոտութեանց, ըստ լեզուաբանութեան և ըստ մարդաբանութեան,—հայերի մուտքը պատմական բեմի վրայ, քրիստոնէութեան մուտքը Հայաստան, հոգևոր վերածնութիւն և ոսկեդար. հայ պատմագրութիւնը՝ բաժանուած երեք շրջանները—Ե—Ը դար, Ը—ԺԲ դար և ԺԲ—ԺԸ դար. 2) բուն զործից, ուր տալիս է նախ պատմական դէմքերի քննական նկարագրութիւնն ու ապացուցադրումը հետեւել էական տիպերի—թագաւորի, իշխանի, հոգևորականի և կնոջ—քաղուած հայ պատմագրերից (Մովս. Խորենացի, Ագաթանգեղոս, Փաւստոս Բիւզանդ, Կորիւն, Ղազար Փարպեցի, Եղիշէ, Մերէս, Յովհան Կաթողիկոս):

Գործի այս երկու մասերն այնքան ընդարձակ են, որ նրանցից ամէն մէկը կարող էր առանձին մի շարադրութիւն կազմել: Եւ սակայն գործի ընդարձակութիւնը արգելք չի եղած խնամոտ մշակութեան, որը չի կարող չխոստովանել ամէն մի անաչառ քննադատ:

Այժմ ներուի ինձ մի քանի մանր դիտողութիւններ, որոնք, աւելորդ է ասել, բուն գործի վրայ ստուեր ձգել չեն կարող:

Էջ 7. Մէջ է բերուած, առանց որ և է դիտողութեան, Գեղեցէրի ենթադրութիւնը, որպէս թէ Վանայ շրջանում հայ բառի խմատով գործածուած խալ անունը կարող էր յիշեցնել մեզ խալդ անունը: Իւրաքանչիւր ուսումնական հայի յայտնի է, որ Վանեցիք ոչ միայն հալ ալ և բոլոր հոգ սկսող բառերի մէջ հիփոխարէն արտասանում են խ, որով և Գելցէրի ենթադրութիւնը միանգամայն դառնում է անհիմն:

Էջ 9. Հեղինակն առանց այլևայլութեան տեղ է տալիս պրոֆ. Ենսէնի այն կարծիքին, թէ Հիտտիտները նախահայերն են և թէ հայերի հեթանոսական կրօնը, նոյնիսկ արդի հայերէն լեզուն ու մարդկանց յատուկ անունները շարունակութիւնն են Հիտտիտների կրօնի, լեզուի ու անունների: Ներուի ինձ այս առթիւ դիտել տալ, որ Ենսէնի այդ կարծիքը, զէթ լեզուական տեսակէտից չի արդարացում: Մի քանի բառերի արտաքին նմանութիւնը դեռ բաւական չէ մի այդպիսի ծանրակշիռ հզորակացութեան յանգելու համար, և այնպիսի գիտնական լեզուաբաններ, ինչպիսին են Մէյլէ և Անդրէաս (երկուսն էլ առաջնակարգ հայագէտներ) միանգամայն անընդունելի են համարում Ենսէնի այդ տեսութիւնը:

Էջ 24. Նմանօրինակ վստահութեամբ հերքնկաւում է Հաքոստահուզէնի հետեւալ ենթադրութիւնը. «Նախարարների և իրանց գիւղացիների միջև յարաբերութիւնները կալուածատիրական չէին այլ հողատիրական: Գիւղացիներն ազատ էին և ինքնօրէն: Նրանց մէջ տեղի ունեցած բոլոր վէճերը քննուում,

հարթուում էին համայնական ժողովներում. դատաւորի պաշտօնը վարում էին համայնքից ընտրուած գիւղական աւագները: Մարզպանները (Satrap) համարւում էին երկրի, դատական գործերի և հողերի վերին տէրեր, որոնց գիմելու պարտաւոր էին միայն բանակի վերաբերեալ և ուրիշ որոշ խնդիրներում: Իսկ ստրկութեան մի անձնական ստորադրութիւն հայերի մէջ երբէք գոյութիւն չի ունեցել: Դրա համար էլ զժգոհութեան ու գիւղացիական խռովութեանց ընաւ չենք հանդիպում:

Հաքստհուգէնի այս խօսքերը կարող են միանգամայն ճշմարիտ լինել, բայց երբ առանց պատմական վկայութեանց են, պ. Յովհաննիսեանի սոյն դիտական-քննական երկում տեղ չպէտք է գտնէին, ըստ իս:

Դարձեալ, միթողի տեսակէտից, սխալ է, էջ 27, յայտարարել, որ Հայոց մէջ գոյութիւն են ունեցել լեռների, գետերի, անտառների, տների պահապան կամ բնակիչ յաւերժահարսեր, ղեկեր և այլ ոգիներ՝ առանց յիշատակելու այն աղբիւրը, որից այդ տեղեկութիւնը քաղուած ենք, մանաւանդ երբ խօսքը վերաբերում է հին Հայոց:

Էջ 46. Ս. Մեսրոպն անուանւում է հայերէն այրուբնի տեղծիչ (Schöpfer): Միթէ. ես մի բոլէ անգամ չեմ տարակուսում, որ հայ մատենագրութեանց այնքան քաջածանօթ պ. Յովհաննիսեանին յայտնի է, որ Ս. Մեսրոպը ոչ տեղծից և հնարեց, այլ լրացրեց յոյն այրուբները համաձայն հայ լեզուի պարունակած ձայներին և որ նրա գլխաւոր արժանիքը այդ ձայներն ըմբռնելն ու նրանց համաձայն մի լրիւ այրուբն կարգի բերելն ու զործածութեան մէջ դնել կարողանալն էր:

Չկամենալով աւելի երկարել այս կարգի դիտողութիւններիս շարքը՝ բաւականանում եմ արանցով, շեշտելով մի վերջին անգամ ես, որ պ. Հ. Յովհաննիսեանի սոյն աշխատութեամբ լուսարանւում են ոչ միայն Ե—Ը դարերը մանրամասն կերպով, այլ և, համառօտակի, բայց ամբողջ կերպով մեր ամբողջ անցեալը անյիշատակ ժամանակներից մինչև ԺԸ դարը: Ծայր է ի ծայր կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ և արժանի է իր պատուաւոր տեղը գրաւելու իւրաքանչիւր բանասէրի գրադարանում:

Մեսրոպ վարդ. Մախուդեանց